

**ԱՆԳԼԵՐԵՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Հորվածում ներկայացվում է անգլերեն կրոնական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը, հաշվի առնելով մշակման մեթոդաբանական հիմքերը, մասնագիտական դասընթացի ուղղվածությունը, ուսանողների լեզվական իմացության մակարդակը, ճանաչողական, մասնագիտական դրդապատճառները:

Կարևորվում է անգլերեն կրոնական բառապաշարի փուլային ուսուցումը, երբ հստակորեն մատնանշվում են նախապատրաստական, նախախոսքային և խոսքային վարժությունների կիրառման ընթացակարգերը: Համապատասխան վարժությունների համակարգ մշակելիս, հաշվի է առնվել բառ-հասկացույթ հարաբերակցությունը, առ այն, որ բառը լեզվական, իսկ հասկացույթը մտածելակերպի միավոր է:

***Բանալի քառեր.** բիրլեիզմներ, կրոնական բառապաշար, հասկացույթ, ճանաչողական դրդապատճառ, ինքնագնահատման թղթապանակ, իրակություն-տերմին, կրոնական-մշակութային տիրույթ, զուգահեռ-համաժամանակյա ընթերցանություն, կրոնական իրություն, հենքային/մասնագիտական գիտելիք, նախախոսքային-խոսքային վարժություն*

Արդի փուլում մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացներում խնդիր է դրվում կիրառել բառապաշարի ուսուցման այնպիսի վարժություններ, որոնք չեն հակասում մի կողմից՝ հաղորդակցական մոտեցման սկզբունքներին, մյուս կողմից՝ անգլերենը հատուկ նպատակներով դասընթացի խնդիրներին: Հետևաբար նպատակ է դրվում ապահովել ուսանողների օտարալեզու հաղորդակցական կարողությունների շարունակական զարգացումը:

Լրացման, փոխատեղման, համապատասխանեցման վարժությունները արդյունավետ են թե թույլ, թե միջին և թե ուժեղ խմբերում: Կրոնական բառապաշարի հաղորդակցական-ինտերակտիվ մեթոդներով ուսուցանելու տեսանկյունից առավել արդյունավետ են փոխակերպական վարժությունները:

Որոշ մեթոդիստներ թերահավատորեն են մոտենում ինտերակտիվ բնույթի վարժությունների կիրառմանը, քանի որ ուսուցման համար նախատեսվող ժամաքանակը բավարար չէ:

ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետում իրականացված փորձարարական աշխատանքը ցույց է տալիս, որ անգլերեն եկեղեցակրոնական բառապաշարը յուրացվում է հիմնականում այսպես կոչված նախախոսքային-խոսքային, քերականական վարժություններով, որոնք ավելի շատ զարգացնում են ուսանողների ընկալողական հմտությունները:

Ընդհանուր առմամբ, նշված ֆակուլտետում անգլերենը ուսուցանվում է տարբեր դասագրքերով, ձեռնարկներով, ըստ մոդուլների ընտրված տեքստերով և վարժություններով:

Համապատասխան վարժությունների ընտրության տեսանկյունից կարելի է առանձնացնել Ս. Ռ. Թումանյանի հեղինակությամբ լույս տեսած անգլերենի դասագիրքը, նախատեսված աստվածաբանության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների համար: Դասագիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը բաղկացած է 12 դասամիավորից, որոնք սկսվում են համապատասխան կրոնական տեքստերով: Տեքստերը վերցրած են Հին կտակարանից՝

The Fall of Man, The Waters Recede, Hagar and Ismael, Sodom and Gomorrah Destroyed, Moses and the Burning Bush, At Mount Sinai, Not Because of Israel's Righteousness, The Birth of Samson, David and Goliath, Solomon Asks for Wisdom, Queen Vashti Deposed, Job:

Սույն դասագրքում տեղ գտած եկեղեցակրոնական տեքստերին հաջորդում են բառապաշարի ծանուցումները: Բառերի բացատրությունները տրվում են անգլերեն:

Հաջորդ փուլում հեղինակն առաջարկում է ընկալումը ստուգող առաջադրանքներ, որոնք պարունակում են 8 հարց: Օրինակ՝ ուսանողները պետք է պատասխանեն հետևյալ հարցերին՝

Are the following statements true or false? Correct the false ones.

The serpent was a cunning creature.

God deceived Adam and his wife when he told them that if they at of the tree in the middle of the garden they would die.

Կարելի է ասել, որ մենք գործ ունենք նախապատրաստական վարժության հետ, երբ ուսանողները պարտաատվում են իրենց ակտիվ խոսքի մեջ կիրառել նոր բառապաշարը:

Հաղորդակցական ուղղվածություն ունի Vocabulary in Class առաջադրանքը, քանի որ ըստ այդ առաջադրանքի՝ ուսանողներն աշխատում են զույգերով:

Ըստ հաջորդ վարժության պահանջի՝ առաջարկվում է համապատասխանեցնել տրված բառերը:

Օրինակ՝	
Serpent	a. topress
To increase	b. Toput
Toil	c. Snake
Offspring	d. Tomultiply
To crash	e. Cunning
Belly	f. Hardwork
Crafty	g. bare
Naked	h. Burning

/Թումանյան, 2007: 13/:

Նույն բնույթի վարժություն է հաջորդ լրացման վարժությունը, երբ տրվում է բառացանկ և բաց թողած տեղերով տաս նախադասություն:

Հաջորդ վարժությունը բառակազմական բնույթի է, երբ առաջարկվում է նշված բառերով կազմել նոր բառեր, կիրառելով հայտնի նախածանցներ և վերջածանցներ:

Craft-----	fruit-----
Wise-----	please-----
Naked-----	voice-----
Great-----	sorrow-----
Desire-----	rule-----
Thorn-----	sweat-----

/Թումանյան, 2007: 13-15/:

Հաջորդ վարժությունը բառակազմական բնույթի լրացման վարժություն է՝ IV. Fill in the appropriate form of the word in the brackets. Refer to exercise III.

Grammar and Translation Practice բաժինը ենթադրում է քերականական և թարգմանական աշխատանք, որը բաղկացած է վեց առաջադրանքից՝

Find the Armenian equivalents of the following in the Armenian translation of the Bible (Ծննդոց 3).

Compare the following from the Armenian translation with their equivalents in English (Genesis 3).

Գարշապարը խայթել _____

Գլուխը ջախջախել _____

Թշնամանալ _____

Փուշ ու տատասկ _____

III. Insert articles where necessary

In _____ beginning _____ God created _____ heavens and _____ earth.

IV. Fill in the missing prepositions and / or adverbs.

V. Complete the passage choosing from the words below.

VI. Render the following passage into English /Թումանյան, 2007: 13-15/:

Անգլերեն կրոնական ենթալեզուն ուսումնասիրելու համար նախանշվող վարժությունները հիմնականում ընկալողական ուղղվածություն ունեն: Խնդիրն այն է, թե ինչպես կրոնական գիտակցության բովանդակությունը ներկայացնող լեզվական միավորները ուսումնասիրել և յուրացնել խոսքային վարժությունների կիրառմամբ:

Պետք է հստակեցնել այդ պարագայում ընկալողական և խոսքային վարժությունների հարաբերակցությունը: Ակնհայտ է, որ նշված իմաստային դաշտում տարբեր դարձվածները, կադապարույթային բառերը, արտահայտությունները հիմնականում ուսումնասիրվում են ընկալողական մակարդակում:

Բառերի ներմուծման, տեքստի ընթերցման, համապատասխան բառային աշխատանքի և թարգմանության փուլերին կարող են հաջորդել խոսքային կարողությունների զարգացմանը միտված վարժություններ: Օրինակ՝

Answer the following questions:

Compare and memorize:

Ճանաչողական-կառուցողական մոտեցման տեսանկյունից կարևոր է, որ օտարալեզու խոսքի ձևավորումը տեղի ունենա խաղային տեխնոլոգիաներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորողները նոր նյութի յուրացման ընթացքում հաղթահարում են ոչ միայն ճանաչողական, այլև հուզական բնույթի դժվարություններ: Նրանք վախենում են, տագնապ ապրում, զայրանում, ուրախանում և այլն:

Ինչպես այդ առումով նշում է Ա. Գ. Մանուկյանը, «Ասվածի համատեքստում կարևորվում են «հոգետեխնիկական» բնույթի խաղերը, որոնց հիմքում ընկած են դիմախաղերը, մնջախաղերը, «մարմնի լեզվի» տարբեր արտահայտչամիջոցները, որոնց արդյունավետ կիրառումը կարևորագույն նախապայման է արդյունավետ խոսույթաստեղծ գործունեության կազմակերպման» /Մանուկյան, 2009: 63/:

Այստեղ հարց է առաջանում, թե ինչ մեթոդով են ուսանողները համեմատում տվյալ հայերեն-անգլերեն տարբերակները:

Հաջորդ բաժիններում հստակորեն իրագործվում են նույն սկզբունքները, որոնք բավականին արդյունավետ են, երբ հաշվի ենք առնում տվյալ դասընթացի համար նախատեսված սուղ ժամաքանակը:

Փորձարարական խմբերի հետ աշխատանքը ցույց տվեց, որ տարբեր կայքերի հետ նախնական ծանոթացումը օգնում է ուսանողներին ճիշտ և ժամանակին կողմնորոշվել, գտնել համապատասխան տեղեկատվությունը, այն կիրառել իրենց կողմից ներկայացման, ակնարկի, երկխոսության ժամանակ, ներառել իրենց գնահատման և ինքնագնահատման թղթապանակի մեջ:

Օրինակ, տրվում է հոգևոր և կրոնական տերմինների ցանկը` Glossary of spiritual and religious terms (www.religioustolerance.org): Կայքում կարելի է գտնել տարբեր կրոնական ուղղություններին, դավանանքներին վերաբերող տերմինաբանական կայք-էջեր: Կարելի է անգամ գտնել սատանիզմին վերաբերող տերմինաբանության բաժին` Terms related to Satanic Ritual:

Համացանցային աղբյուրների հետ աշխատելու մշակույթի ձևավորումը իր հերթին նպաստում է ուսանողների մոտ ինքնուրույն աշխատանքի կարողությունների ձևավորմանը: Ուսանողները կարողանում են ճանաչել տարբեր իրակություն-տերմիններ, որոնք առնչվում են տարբեր կրոնական-մշակութային տիրույթների:

Հաջորդ փուլում ուսանողներն ուսումնասիրում են եկեղեցակրոնական արտահայտություններ, տարբեր դարձվածային միավորներ` բիբլեիզմներ: Անհրաժեշտ է նշել, որ տերմինների և դարձվածների հետ աշխատանքը կարող է իրականացվել և՛ համաժամանակյա, և՛ ըստ մշակված փուլերի: Բնագիր կրոնական տեքստերի հետ աշխատանքը ենթադրում է տերմինների և դարձվածների հետ համաժամանակյա աշխատանք:

Աստվածաշնչյան հայերեն տարբերակի իմացությունը բիբլեիզմները ճանաչելու և թարգմանելու լավագույն միջոցներից է: Արդյունավետ է Աստվածաշնչի հայերեն և անգլերեն տարբերակների գուգահեռ-համաժամանակյա ընթերցանությունը, որը նպաստում է թե՛ հայերեն, թե՛ անգլերեն բիբլեիզմների, աստվածաշնչյան հաստատուն դարձվածային միավորների արագ յուրացմանը, քանի որ գուգահեռ-համաժամանակյա թարգմանությունը տեղի է ունենում կոնկրետ ենթատեքստերի բացահայտմամբ:

Արդյունավետ է ուսուցման նախնական շրջանում ներմուծել այն դարձվածային միավորները, որոնք ունեն իրենց համարժեքը հայերենում:

daily bread – հաց հանապազօրյա,

the salt of the earth - երկրի աղը,

by/in the sweat of one's brow – քրտինքը դեմքին,

to bind smb. hand and foot – կապել ոտքերն ու ձեռքերը,

vanity of vanities – ունայնություն ունայնության,

to cast pearls before swine- շաղ տալ մարգարիտներ խոզերի առաջ:

Հաջորդ փուլում ներմուծվում են այն բիբլեիզմները, որոնք ներկայացնում են կրոնական իրույթները կամ անհամարժեք բառապաշարը:

The fleshpots/flesh-pots of Egypt – ցով կյանք, մարմնական հաճույքներ:

Hewers of wood and drawers of water (Joshua 9:21) - ծանր աշխատանք կատարող մարդ կամ մարդիկ, սևագործ բանվոր

To hide one's light under a bushel (Matthew 5:15) – թաքցնել սեփական տաղանդը, լինել չափից ավել համեստ

To play Samson in the temple – կործանել թշնամիներին և կործանվել:

Անգլերեն և հայերեն բիբլեիզմների համեմատական ուսումնասիրությունը զարգացնում է ուսանողների քննադատական մտածողությունը, դրական վերաբեր-

մունք է ձևավորում անգլերենի ուսուցման նկատմամբ: Ուսանողները գեղագիտական բավականություն են ստանում, երբ թարգմանում կամ իրենց ակտիվ խոսքի մեջ կիրառում են անգլերեն բիբլիկոմները: Օրինակ՝

Damascene conversion -կտրուկ փոփոխություններ հայացքներում,

To suffer fools gladly (2 Corinthians 11:19) – ներողամիտ լինել տկարամիտների հանդեպ,

To cast one’s bread upon the waters (Ecclesiastes 11:1) - անշահախնդիր բարեգործություն անել, լավություն արա, ջուրը զցի:

Հատկաբանությունների, ասույթների և ասացվածքների ուսուցումը նույնպես իրականացվում է աստվածաշնչյան հայտնի ասացվածքների ցանկի ներմուծմամբ: Ընդ որում, ուսանողներին ներկայացվում են համացանցում հայտնի կայքերը: Աշխարհում հայտնի www.questia.com/FreeTrial անվճար էլեկտրոնային գրադարանը՝ *English phrases and sayings that derive from the Bible*, օրինակ, տալիս է աստվածաշնչյան դարձվածքներն ու ասացվածքները, դրանց մեկնաբանությունները, համապատասխան հղումներով, որոնք վերցրած են Աստվածաշնչից:

Ուսանողները հատկապես մեծ պատասխանատվությամբ են մոտենում համապատասխանեցման վարժություններին: Ուսուցման նախնական փուլում նրանց առաջարկվում է տարբեր դժվարության վարժություններ, որոնք հնարավոր է կատարել, եթե ուսանողները ունեն որոշակի հենքային և մասնագիտական գիտելիքներ: Ընդ որում՝ կարևոր չէ, թե ինչ լեզվով են ձեռք բերվել այդ գիտելիքները: Ստորև բերվում է վարժության/թեստի մի օրինակ, երբ հենքային/մասնագիտական գիտելիքներն անհրաժեշտ են տվյալ թեստը կատարելու համար:

World Religions Vocabulary Quiz

Directions: Match the vocabulary words on the left with the definitions on the right.

Answer	Word	Definition(s)
_____	1. faith	A. Something that represents something else
_____	2. religion	B. confidence or trust in a person or thing that is not based on proof
_____	3. Christianity	C. An Indian religion founded in the 15th century with principal beliefs of faith and justice
_____	4. Hinduism	D. the dominant religion of India consisting of the beliefs, customs and values based on the worship of many gods
_____	5. Islam	E. A religion practiced by Muslims as a faith regarded as revealed through Muhammad, the Prophet of Allah

_____	6. Buddhism	F. relating to an Asian religion that teaches that suffering is caused by desire and the suffering will cease when the desire ceases.
_____	7. Sikhism	G. Acknowledging belief in Jesus Christ or following the religion based on the life and teachings of Jesus Christ.
_____	8. Judaism	H. An ancient religion of Japan to establish a connection of present dat Japan and ancient Japan
_____	9. Bahatism	I. Chinese philosophy developed from the teachings of the Chinese philosopher Confucius
_____	10. Confucianism	J. A process in which messages that have been communicated to a prophet are communicated to others
_____	11. Jainism	K. Dedicated as holy; set apart as pertaining to deity
_____	12. Shintoism	L. Actions performed for symbolic value including traditions of a religious community
_____	13. sacred	M. An ancient Indian religion that practices non-violence toward all living things and teaches self-reliance
_____	14. prophecy	M. A collection of beliefs and cultural systems that establish that relate humanity to spirituality.
_____	15. ritual	O. relating to a religion founded in Iran in 1863 emphasizing the spiritual unity of all humankind incorporating Islamic and Christian tenets
_____	16. symbols	P. The Jewish religion based on laws revealed to Moses and recorded in the Torah

(www.teach-nology.com)

Խոսութային իրազեկության զարգացման և ստուգման համար նպատակահարմար է կիրառել գրավոր խոսույթի լրացման՝ Completion, բազմընտրության՝ Multiple-choice, խոսույթի լրացման, դերախաղային-խոսութային, ինքնագնահատման խոսութային, դերախաղային ինքնագնահատման առաջադրանքները (Մանուկյան, 2009: 93):

Նշված առաջադրանքները կարելի է արդյունավետորեն կիրառել թե՛ անգլերենի ուսուցման մասնագիտական, թե՛ անգլերենը հատուկ նպատակներով կողմնորոշման դասընթացներում:

Եզրակացություն. Կրոնական բառապաշարի ուսուցման համատեքստում

կարևոր է հստակեցնել, թե ինչ մեթոդաբանական դիրքերից են ընտրում այս կամ վարժությունը կամ առաջադրանքը, քանի որ ավանդական համարվող մոտեցումները ենթադրում են բառապաշարի ուսուցում լեզվական մակարդակում: Ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը ենթադրում է ընտրել բառապաշարի ուսուցման վարժությունները՝ մտքի մակարդակում:

Համապատասխան վարժությունների համակարգ մշակելիս, հաշվի է առնվել բառ-հասկացույթ հարաբերակցությունը, առ այն, որ բառը լեզվական, իսկ հասկացույթը մտածելակերպի միավոր է:

Համացանցային աղբյուրների հետ աշխատելու մշակույթի ձևավորումը իր հերթին նպաստում է ուսանողների ինքնուրույն աշխատանքի կարողությունների ձևավորմանը: Տարբեր ուսումնական իրադրություններում շրջանառվող դասագրքերի, համացանցային ուսուցողական կայքերի համադրումը հնարավորություն է ընձեռում արագ և հեշտորեն ընտրել ոչ միայն տեքստերը, այլև վարժությունները: Թե՛ նախապատրաստական, թե՛ նախախոսքային-խոսքային վարժությունների ընտրությունը պետք է իրականացվի ըստ դասընթացի առանձնահատկությունների, ուսանողների լեզվական մակարդակի, առաջնային համարելով բնագրային տեքստերը և իրական խոսքային իրադրությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թումանյան Ս.Ս. Read the Bible and Improve Your English (Անգլերենի դասագիրք Աստվածաբանության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների համար), Երևան, 2007.
2. Մանուկյան Ա.Գ. Խոսքային իրազեկության փուլային զարգացման առանձնահատկությունները մասնագիտական անգլերենի դասընթացում: /Թեկ. առ./, Երևան, 2009.
3. www.religioustolerance.org.
4. www.questia.com/FreeTrial.
5. www.teach-nology.com.
6. Religion and Society at: <http://www.hartfordinstitute.org/>
7. Scientology and Dianetics terms: <http://www.scientology.org/>
8. Metaphysical terms: <http://thecave.virtualave.net>
9. Sikh terms: <http://www.sikhs.org> and <http://www.canteach.ca/>
10. Vampire/Vampyre terms/

Ս. ГРИГОРЯН – Комплекс упражнений по обучению английской религиозной лексики. – В статье рассмотрены проблемы отбора принципов обучения английской религиозной лексики с учетом их методологических основ, особенностей данного профессионально-ориентированного курса, языкового уровня студентов, их познавательных мотивов и потребностей. Подчеркнуто значение поэтапного обучения лексики, с применением подготовительных, предречевых и речевых упражнений. Определено соотношение слова и концепта, в том плане, что первое изучается на языковом уровне, а второе на ментальном уровне.

Ключевые слова: библеизмы, религиозная лексика, концепт, когнитивная мотивация, портфолио самооценивания, реалия-термин, религиозно-культурное пространство, параллельно-синхронное чтение, религиозная лакуна, фоново-профессиональные знания, предречевые/речевые упражнения

SH. GRIGORYAN – *A Set of Exercises for Teaching English Religious Vocabulary.* – The paper deals with the problem of selecting principles of teaching religious vocabulary with special reference to their methodological foundations, the peculiarities of ESP course, the students' language level, their cognitive motives and needs. It emphasizes the importance of teaching the vocabulary stage by stage through preparation, pre-speech and speech exercises. The article determines the correlation of Word and Concept in teaching English as the first is studied at language level, and the latter is studied at mental level.

Key words: biblical expressions, religious vocabulary, concept, cognitive motivation, self-estimation portfolio, realia-term, religious-cultural domain, parallel-synchronic reading, religious lacuna, background/professional knowledge, pre-speech and speech exercises